ՍՈՒՐԵՆ ՔՐՄՈՅԱՆ
ՀՀ արդարադատության նախարարի տեղակալ,
իրավաբանական գիտությունների թեկնածու

ՇՈՒՇԱՆԻԿ ՂՈՒԿԱՍՅԱՆ
Երևանի պետական համալսարանի իրավագիտության
ֆակուլտետի քաղաքացիական իրավունքի ամբիոնի
ասպիրանտ

ԱՆՆԱ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ
Էլեկտրոնային արդարադատության ոլորտի փորձագետ

ԻՐԱՎԱԿԱՆ ԳՈՐԾԻՔՆԵՐԻՆ ՎԵՐԱԲԵՐԵԼԻ ԴԱՍԸՆԹԱՑՆԵՐԻ ՆԵՐԴՐՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ԱՐԴԻԱԿԱՆ ՄՈՏԵՑՈՒՄՆԵՐ

Հոդվածում ուսումնասիրվել է իրավական տեխնոլոգիաներին վերաբերելի դասընթացների ներդրման անհրաժեշտության խնդիրը, ներկայացվել է արտասահմանյան առաջատար ուսումնական հաստատությունների փորձը, վեր են հանվել ՀՀ կրթական համակարգի որոշ հիմնախնդիրներ, ներկայացվել են էլեկտրոնային կառավարման համակարգերի ուսուցման ուղղությամբ քայլեր ձեռնարկելու առաջարկներ:

Հիմնաբառեր- *իրավական կրթություն, էլեկտրոնային ծրագրեր, իրավական տեխնոլոգիաներ, կրթության որակ:*

Ժամանակակից աշխարհում իրավական տեխնոլոգիաները (գործիքները) մեծ ազդեցություն ունեն իրավական ողջ համակարգի վրա: Իրավական գործիքներին տիրապետելը դարձել է ժամանակի հրամայական: Իրավական տեղեկատվության հավաքումը, պահպանումը և փոխանցումը արդի ժամանակներում առավելապես տեղի է ունենում էլեկտրոնային տիրույթում, ինչն արդարացիորեն առաջադրում է այդ տիրույթների վերաբերյալ հստակ պատկերացում կազմելու, դրանցից օգտվելու, գործնական կարողությունները զարգացնելու անհրաժեշտության պահանջ:

Բազմաթիվ առաջադեմ երկրներ, հաշվի առնելով վկայակոչված խնդրի կարևորությունը, բարձրագույն ուսումնական հաստատություններում նախատեսում են հատուկ կրթական ծրագրեր, որոնք ուղղված են իրավագիտության ֆակուլտետների ուսանողների՝ իրավական ռեսուրսներից և գործիքներից օգտվելու կարողությունների հետևողական զարգացմանը, ամրապնդմանը, դրանց վերաբերյալ համապարփակ տեղեկատվության փոխանցմանը:

Բացի կրթական ծրագրեր ներդնելուց, մի շարք ուսումնական հաստատություններում գործում են նաև հատուկ կենտրոններ կամ լաբորատորիաներ, որոնք մասնագիտացած են էլեկտրոնային արդարադատության, իրավունքի և տեխնոլոգիաների ոլորտներում:

Սա պայմանավորված է ոչ միայն կրթության որակի բարձրացման անհրաժեշտությամբ, այլև աշխատաշուկայի պահանջարկով՝ հաշվի առնելով, որ և՛ պետական, և՛ մասնավոր հատվածում առկա է գործնական հմտություններով օժտված մասնագետների ներգրավման անհրաժեշտություն:

Պետք է նշել, որ իրավական գործիքների, իրավունքի և տեխնոլոգիաների հարաբերակցությանը, իրավական նորարարությանը վերաբերելի կրթական ծրագրերի ներդրումը կամ այս ուղղությամբ հատուկ կենտրոնների ստեղծումը միշտ գտնվել և գտնվում է արտասահմանյան առաջատար ուսումնական հաստատությունների որդեգրած քաղաքականության կիզակետում:

Միջազգային փորձի ուսումնասիրությունը հնարավորություն է տալիս առանձնացնել այս ոլորտում առաջատար համալսարանների շարքը:

Մասնավորապես, Harvard-ի իրավունքի դպրոց[1] (Իրավունք, գիտություն և տեխնոլոգիաներ ծրագիր), Seattle-ի իրավունքի դպրոց[2] (Տեխնոլոգիաներ և նորարարություն ծրագիր), Stanford-ի իրավունքի դպրոց[3] (Իրավական ինֆորմատիկայի կենտրոն), Chicago-Kent իրավաբանական քոլեջ[4] (Արդարադատության մատչելիության և տեխնոլոգիաների կենտրոն), Suffolk-ի իրավունքի դպրոց[5] (Իրավակիրառ տեխնոլոգիաների և նորարարության ինստիտուտ), Yale-ի իրավունքի դպրոց[6] (Ընդլայնված իրավական հետազոտություն, մեթոդներ և աղբյուրներ ծրագիր, Մասնագիտացված իրավական հետազոտություն ծրագիր, Իրավական հետա-

զոտությունը և տեխնոլոգիաները կիրառության մեջ ծրագիր), Berkeley-ի իրավունքի դպրոց[7] (Իրավունք և տեխնոլոգիա ծրագիր), Columbia-ի իրավունքի դպրոց[8] (Փաստաբանական պրակտիկայի համար նախատեսված կլինիկա), Georgetown-ի իրավունքի կենտրոն[9] (Նորարարության և իրավակիրառ պրակտիկայի մրցույթ և սեմինար), Notre Dame-ի իրավունքի դպրոց[10] (Իրավական տեխնոլոգիաների և ինֆորմատիկա ծրագիր), New South Wales համալսարանի իրավագիտության ֆակուլտետ[11] (Ընդլայնված իրավական հետազոտություն ծրագիր):

Պետք է նշել, որ ՀՀ բարձրագույն ուսումնական հաստատություններում այս ուղղությամբ կատարվող քայլերը բավարար չեն, և առկա է կրթական ծրագրերի որակական փոփոխման, կրթության որակի բարելավման անհրաժեշտություն:

Թերևս այս հանգամանքի հաշվառմամբ էր պայմանավորված նաև ՀՀ կառավարության կողմից 2015 թվականի օգոստոսի 31-ի N 40 արձանագրային որոշմամբ «Իրավական համաուսուցման, իրավական դաստիարակության և իրավաբանական կրթության համակարգի վերակառուցման հայեցակարգ»-ի ընդունումը, որով ևս ընդգծվում էր ՀՀ իրավական համաուսուցման և համադաստիարակության պետականորեն ընդունված և նպատակայնորեն գործող համակարգի, միջին և բարձրագույն մասնագիտական իրավաբանական կրթության որակի, իրավաբանական կրթությանը ներկայացվող պահանջների բարձրացման անհրաժեշտությունը:

Ներկայումս, ՀՀ բարձրագույն ուսումնական հաստատությունների իրավագիտության ֆակուլտետներում ուսանողների գործնական հմտությունների զարգացմանն են ուղղված մագիստրոսական ծրագրերի շրջանակում դասավանդվող այնպիսի առարկաներ, ինչպիսիք են՝ «Իրավաբանական գրագրությունը», «Տեղեկատվական տեխնոլոգիաները», «Իրավաբանի մասնագիտական հմտությունները», իսկ ՀՀ-ում գործող էլեկտրոնային կառավարման համակարգերի օգտագործման, դրանց կիրառության, այդ համակարգերի վերաբերյալ համապարփակ տեղեկատվության փոխանցման ուղղվածություն ունեցող ծրագրերը բացակայում են:

Հաշվի առնելով մի կողմից պրակտիկայի կարիքներին կրթության բովանդակության համապատասխանության անհրաժեշտությունը, մյուս կողմից ՀՀ որդեգրած էլեկտրոնային կառավարման համակարգերի լայնածավալ գործարկման քաղաքականությունը, պետք է արձանագրել, որ նման ծրագրերի ներդրումը դարձել է ժամանակի հրամայական:

Հաշվի առնելով վերը նշվածը՝ գտնում ենք, որ ՀՀ բարձրագույն ուսումնական հաստատությունների իրավագիտության ֆակուլտետներում պետք է ձեռնարկվեն համապատասխան քայլեր՝ ստորև նշված էլեկտրոնային կառավարման համակարգերի դասավանդման ուղղությամբ: Մասնավորապես,

1. Mulberry էլեկտրոնային փաստաթղթաշրջանառության համակարգ, որի միջոցով ուսանողները համապարփակ պատկերացում կկազմեն պետական համակարգում ներդրված փաստաթղթաշրջանառության համակարգի, փաստաթղթերի մուտքագրման, ելքագրման, առաքման, համակարգի այլ առանձնահատկությունների վերաբերյալ, ձեռք կբերեն համակարգից օգտվելու գործնական հմտություններ, որոնք կարևոր նշանակություն կունենան պետական համակարգում աշխատանքի անցնելու համար:

2. Հայաստանի իրավական տեղեկատվական համակարգ, իրավական ակտերի նախագծերի հրապարակման միասնական կայք, որոնց միջոցով ուսանողները ձեռք կբերեն բոլոր անհրաժեշտ գործնական հմտությունները նորմատիվ իրավական ակտերը, գերատեսչական իրավական ակտերը, պաշտոնական պարզաբանումները, ՀՀ Սահմանադրական դատարանի, ՀՀ վճռաբեկ դատարանի որոշումները, միջազգային պայմանագրերը, հուշագրերը և այլ իրավական ակտերը որոնելու համար, քաջատեղյակ կլինեն բոլոր օրենսդրական նախաձեռնություններին, հնարավորություն կունենան ակտիվ մասնակցել իրավական ակտերի նախագծերի հանրային քննարկումներին:

3. Դատական տեղեկատվական համակարգ, Մարդու իրավունքների եվրոպական դատարանի կայքէջ, Եվրոպայի խորհրդին առընթեր Ժողովրդավարություն իրավունքի միջոցով եվրոպական հանձնաժողովի (Վենետիկի Հանձնաժողով) կայքէջ, որոնց միջոցով ուսանողները ձեռք կբերեն դատական ակտերի որոնման, Մարդու իրավունքների եվրոպական դատարանի նախադեպային պրակտիկայի ուսումնասիրության, վերլուծության, ներպետական օրենսդրության բացերը, թերությունները հայտնաբերելու և կատարելագործելու անհրաժեշտ գործնական հմտություններ, կծանոթանան իրավական ակտերի նախագծերի և գործող իրավական ակտերի վերաբերյալ Վենետիկի Հանձնաժողովի կարծիքներին, հրապարակված զեկույցներին, տարբեր երկրների փորձին՝ հնարավորություն ունենալով դրանք հետագայում օգտագործել գիտական աշխատանքներում և օրինաստեղծ գործունեության ընթացքում:

Բացի վերը նշված ծրագրերից, մեծ նշանակություն ունեն նաև այնպիսի էլեկտրոնային համակարգերի կիրառման հմտությունների զարգացումը՝ ինչպիսիք են.

1. ՀՀ արդարադատության նախարարության իրավաբանական անձանց պետական ռեգիստրի էլեկտրոնային համակարգը:

2. Լիցենզիաների հայտերի, լիցենզավորված անձանց հաշվետվությունների ընդունման համակարգը:

3. ՀՀ էլեկտրոնային նոտար և Քաղաքացիական կացության ակտերի միասնական էլեկտրոնային համակարգերը:

4. Մտավոր սեփականության գործակալության հայտերի ընդունման, տեղեկատվական որոնման էլեկտրոնային համակարգերը:

5. Հարկային հաշվետվությունների ներկայացման և Պետական վճարումների էլեկտրոնային համակարգերը:

6. Դատական ակտերի հարկադիր կատարման էլեկտրոնային աճուրդի, Ինտերնետով հրապարակային ծանուցման, Էլեկտրոնային վիզա համակարգերը:

7. ՀՀ էլեկտրոնային ծանուցման և փոստի պաշտոնական համակարգը:

Մեր կողմից ներկայացված առաջարկների կենսագործմանն ուղղված քայլերի ձեռնարկումը կնպաստեն իրավական կրթության բարձր մակարդակի ապահովմանը, մագիստրոսական կրթական ծրագրերի արդյունավետության բարձրացմանը, տեսության և պրակտիկայի միջև անհրաժեշտ կապի ապահովմանը, պրակտիկայի կարիքներին կրթության բովանդակության համապատասխանությանը, գործնական հմտություններով օժտված մասնագետների պատրաստմանը[12]:

---

[1] http://hls.harvard.edu/dept/academics/programs-of-study/law-science-and-technology/

[2] http://www.innovativelawstudent.com/2016/04/7-law-schools-cutting-edge-tech-innovation/

[3] https://law.stanford.edu/codex-the-stanford-center-for-legal-informatics/

[4] http://www.innovativelawstudent.com/2016/04/7-law-schools-cutting-edge-tech-innovation/

[5] https://www.americanbar.org/publications/law_practice_magazine/2014/july-august/teaching-the-technology-of-practice-the-10-top-schools.html

[6] http://library.law.yale.edu/research-courses-yale-law-school-2014-15

[7] https://www.law.berkeley.edu/research/bclt/students/law-technology-certificate-program/

[8] https://www.americanbar.org/publications/law_practice_magazine/2014/july-august/teaching-the-technology-of-practice-the-10-top-schools.html

[9] https://www.americanbar.org/publications/law_practice_magazine/2014/july-august/teaching-the-technology-of-practice-the-10-top-schools.html

[10] http://radicalconcepts.com/wp-content/uploads/2015/04/LegalTechnologyInformaticsSyllabusv2.pdf

[11] http://www2.austlii.edu.au/~davidv/alr/secure/outlines/old/Objectives_s107.pdf

[12] Կարևոր է նաև իրավական աշխատանքներ կատարելու համար զեկույցներ, ելույթներ պատրաստելու հմտությունների զարգացման ծրագիրը (Power Point), որը ոչ միայն կօգնի բարձրացնել ուսումնական հաստատություններում կազմակերպվող գիտաժողովների և համանման միջոցառումների որակը, այլև կօգնի ապագա իրավաբաններին իրենց պրակտիկ գործունեության ընթացքում տիրապետել տարբեր հարթակներում զեկույցներ պատրաստելու անհրաժեշտ հմտություններին:

Сурен Крмоян
Заместитель министра юстиции Республики Армения.
Кандидат юридических наук

Шушаник Гукасян
Аспирант кафедры гражданского права юридического
факультета Ереванского государственного университета

Анна Арутюнян
Эксперт в сфере электронной юстиции

РЕЗЮМЕ
Новые подходы относительно введения курсов юридических инструментов

В статье рассмотрена необходимость введения курсов соответствующих вопросов, касающихся правовой технологии, представлен опыт ведущих зарубежных учебных заведений, представлены некоторые проблемы системы образования и предложения принять меры для обучения систем электронного управления.

***Ключевые слова**: юридическое образование, электронные приложения, правовая технология, качество образования.*

Suren Krmoyan
Deputy Minister of Justice of the Republic of Armenia.
Candidate of Legal Sciences

Shushanik Ghukasyan
PhD student of the Chair of Civil Law of the Faculty
of Law of the Yerevan State University

Anna Harutyunyan
Expert in the Shpere of Electronic Justice

SUMMARY
Up-to-date approaches regarding introduction of courses on legal tools

The article discusses the need to introduce courses on relevant issues related to legal technology, presents the experience of leading foreign educational institutions, presents some problems of the education system and offers to take measures for teaching e-government systems.

***Keywords**: legal education, electronic programs, legal technology, quality of education.*